


ԻՐՈՇՆԻԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՏԵՐՐՈՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼՍՈՒՄ



Մայիսի 16/28-ին, երեկոյեան ժամը 7-ին (ը. ե.).

Դաշնակցական անարևելիչները Գումգաբուի բազմամբոխ հրատարակին վրայ դնողակի հարւածով գետին տասպալելը ին հռչակաւոր դաւաճան փոխաքօմիսէր Մ Ա Ր Գ Ա Ր Ը: Սարսափը եւ միանգամայն ուրախութիւնը ընդհանուր է: Անարևելիչները ազատ են:

Մարգարը Նազըմի աչքին լոյսն էր եւ Պոլսոյ լրտեսութեան ամենէն հզօր նեղուկը: Առաջին անգամ այս դարչելին էր, որ կին լրտեսներ կազմելու գաղափարը յղացաւ եւ գործադրեց:

Մայիսի 27/8-ին, ժամը 7 1/2-ին (ը. ե.).

Դաշնակցական անարևելիչներէն մէկը, Գումգաբու սըրճարանի մը մէջ դաշունահար սպանեց վաղեմի լրտես Մայր եկեղեցիի լուսարար վանեցի Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ը, որ 1890-էն ի վեր մատնիչի ստոր դերը կը կատարէր: Ուտիկանները վրայ կը հասնին, կսկսի կատաղի կռիւ, անարևելիչը հերոսաբար կը մտնի նախապէս քանի մը լիտի ստտիկաններու կեանքը վերցնելէ յետոյ:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Միշտ կուի, միշտ սարսափ ու արհաւիրք, երբէք խաղաղութիւն: Տէրրօր ընդդէմ յեղափոխականների, տէրրօր ընդդէմ սուլթանի կառավարութեան:

Երբէք խաղաղութիւն, քանի դեռ կանգուն է Համիդ բռնաւորի արիւնթաթախ գահը, քանի դեռ կանգուն է սուլթանական բարբարոս ըէթիմը, իր հաւատարիմ շուն լրտեսների անվերջ լէգէօններով, կեղտի եւ անբարոյականութեան մէջ նեխած գազան փաշաներով, գայմագամներով, փօլիսներով, զափթիաներով...

Միշտ հեռու եւ հեռու տարածուած է յեղափոխութեան փրկարար հոսանքը, միշտ աւելի եւ աւելի հասունանում է ժողովրդի մէջ յեղափոխական եռանդը: Դրա հետ զուգակցաբար միշտ աւելի ու աւելի լարուած է ձգնաժամը, սաստկանում է անտագօնիզմը երկու թշնամական բանակների մէջ: Երկուսն էլ գործում են տենդային եռանդով մինը միւսին տասպալելու դիտաւորութեամբ, երկուսն էլ հաւասարապէս ոյժ են տալիս յեղափոխական մտքի զարգացման, մէկն ուղղակի, միւսն անուղղակի կերպով, մէկը գիտակցաբար, միւսն անգիտակցաբար:

Կար ժամանակ, երբ սուլթանը մտածում էր թեթեւ հարւածով մեռցնել հայկական յեղափոխութիւնը, խեղդել Հայկական խնդիրը, որ նոր էր մարմնանում, որ տակաւին իր խանձարուրի մէջ էր: Այդ այն ժամանակն էր, երբ չկար յեղափոխական կազմակերպութիւն, չկար յեղափոխական հանրային գիտակցութիւն, ասպարէզը անհատներինն էր, իսկ անհատների դէմ թշնամին ունէր կախաղան, բանտեր ու արքայապալարներ: Ամբօխը բուն ժողովուրդը գրեթէ անտարբեր էր, հեռու գործօն մասնակցութիւնից: Զօհուած էին նրա զաւակները, իր աչքի առաջը կախաղան էին բարձրանում, մաշուած էին նրանք տարիներով մուսլ ընտանրում, փայլուն անձնուրացութեամբ կրում էին անլուր, առասպելական տանջանքներ: Ժողովուրդը տեսնում էր այդ բոլորը եւ սակայն մնում էր, ընդհանուր առմամբ անշարժ, կրաւորական, սոսկ հանդիսատես:

Այն ժամանակից անցան տարիներ: Անհատները կատարեցին իրենց պատմական կոչումը, իջան բեմից, նըրանք արտասանեցին մեր յեղափոխական պատմութեան «առաջին խօսքը» եւ թողին վերջինը ժողովրդային ընդհանրութեան:

Անհատական շարժումները փոխեցին խմբական շարժումների, յեղափոխական ալիքը տարածեց կենդրոններից բովանդակ Հայաստանի ամենախուլ անկիւնները, վարակեց ամբողջ հայութիւնը, ծնունդ առաւ եւ մարմնացաւ յեղափոխական կազմակերպութիւնը:

Պատմական այդ ճակատագրական պրօցէսի ընթացքում բռնակալութիւնը կատարեց իր քստմնելի դերը: Նա գործադրեց իր յանցաւոր հայկործան քաղաքականութիւնը, սարսափ ու աւեր սփռեց Հայաստանի

վրայ): Համիր կոչւած մարդակերպ վագրը տարիների ընթացքում խմեց Հայաստանի ազնիւ գաւակների յորդահոս արիւնը, հայ յեղափոխական շարժման դէմ հանեց սոսկալի խարազան, մի ինկվիզիցիա, որ ասիական բռնապիտի դժնդակ երեւակայութիւնը միայն կարող է յօրինել: Հայաստանը դարձրեց մշտական արհաւիրքների մի սրտաձմիկ թատրոն:

Սակայն ինչի՞ էր ձգտում և ի՞նչ վաստակեց:

Բոլոր բարբարոսական միջոցներով հանդերձ ձգտելով բնաջինջ անել ազատութեան տենչանքները հայերի մէջ, գոռոզ բռնապետը ոչ միայն հասաւ իր նպատակին, այլ տէրրօրի ու սարսափի քաղաքականութեամբ օր աւուր աւելի ցնցեց ժողովուրդին, աւելի ևս վառեց ապստամբական կրակը, անգիտակցաբար, հակառակ իր կամքին նա յեղափոխականացրեց մի ամբողջ ժողովուրդ և այդպիսով մի անգամ ևս պերճախօս կերպով ապացուցեց կլասիքական առածը՝ «հալածել—տարածել»: Սուլթան Համիրը տարիների ընթացքում մղեց օրհասական կռիւր հայ ժողովուրդի ապստամբական ձգտումների դէմ, սակայն յեղափոխական իրականութիւնը և փաստերի լոգիկան համոզեցին նրան, որ իր ջանքերը ապարդիւն են, իր ցանկութիւնները ունայն պատրանքներ, նա համոզեց, որ ոչ կախաղանով, ոչ բանտերով ու քարոսներով, ոչ էլ բանտային հրեշաւոր տանջանքներով անկարելի է ոչնչացնել յեղափոխութեան սուկալի ուրւականը, որ ամեն ընդամենը պտոյտ է գալիս նրա արիւնոտ գահի շուրջը և սպանում է ջնջել նրա յանցաւոր գոյութիւնը:

Նա լափեց ժողովուրդի անդրանիկ յեղափոխական գաւակներին, բայց նրանց ետևից սողնկի պէս բուսան յեղափոխական ոյժերը, նա հեղինակեց հայկական նշանաւոր սարսափները, որոնք ամիսներ շարունակ սարսափեցնում էին քաղաքակիրթ աշխարհը, աւերակ երկրի փլատակների տակ թաղւեցին տասնեակ հազարաւոր անմեղ հայեր... Բայց այդ բոլորը ապարդիւն էր. հայկական յեղափոխութիւնը կանգուն մնաց և իրօք նմանեց առասպելական Հիդրային: Նրա ամեն մի կալուած գլխի տեղ երկուսն են բուսնում, ամեն մի կաթիլ արիւնից նոր խրախոյս է յայտնում, ամեն մի օրւայ բանասարկութիւնից, ամեն մի կախաղանից նոր ոյժեր են բլլում, նոր ոգևորութիւն և յաղթութեան հպարտ ու զօրեղ գիտակցութիւն:

Այո, համարձակ կարելի է ասել, որ սուլթանի կառավարութիւնը իր խելացնոր ու տմարդի քաղաքականութեամբ տարիների ընթացքում եղաւ ամենախոշոր պրօպագանդիստը հայկական յեղափոխութեան:

Եւ այսօր, պատմական այս տխուր ընդհանր, երբ մենք կանգնած ենք դառն իրականութեան դիմաց, երբ մեր աչքերի առաջ փուլած է սգաւոր Հայաստանը երբեմն չէն, այժմ՝ աւերակ ու փլատակ դարձած գիւղերով, քաղաքներով, երբ հազարաւոր հայ նահատակների

թարմ գերեզմանները ամեն ընդամենը յիշեցնում են դեռ մօտաւոր անցեալի ահեղ կատաստրօֆը— յեղափոխական այդ տխուր ու անմխիթար իրականութեան առջև մենք դարձեալ մխիթարուում ենք, խրախուսուում: Մենք խրախուսուում ենք նրանով, որ տասնեակ տարիների մեր բաղձանքներն իրագործւած ենք տեսնում, որ ունենք յեղափոխական գիտակցութեամբ տողորած մի ամբողջ ժողովուրդ, ունինք յեղափոխական մի մասսա, որ երբէք այլևս, ոչ մի Հէրքուլեսի առաջ չի խոնարհուի:

Անցան այն ժամանակները, երբ այդ մասսան սառնասիրտ կերպով հետևում էր իր հարազատ գաւակների յեղափոխական գործողութիւններին, երբ նա սոսկ համր ականատեսի դերն էր կատարում, առանց աջակցելու, առանց խրախուսելու: Այսօր խիստ տարբեր է պատկերը: Այսօր ինքը ժողովուրդն է գրաւել յեղափոխական ասպարէզը. նա է, որ կոտորում, կոտորում է, նա է, որ յեղափոխական խմբերին առաջնորդում է երկրի ներքը, ապաստան է տալիս, նա է, որ պատսպարում ու պաշտպանում է, քաջալերում ու թև է տալիս հայ հայդուկին, հայ տէրրօրիստին:

Տեսէք, օրը ցերեկով Պոլսի բազմամարդ փողոցներում դաշնակցական ահաբեկիչը հերոսաբար զարնում է մինը միւսի ետևից բռնակալութեան պաշտպաններին, գնդակահար է անում, ի մեծ սարսափ կազմակերպւած լրտեսութեան, և վայրկենաբար անտեսանելի ուրւականի նըման աներևոյթանում է:

Տեսէք, Հայաստանի գաւառներում «Դաշնակցութեան» հայդուկային խմբերը մինը միւսի ետևից հանդիսաւոր ու յաղթական արշաւանքներ են գործում, կուռում են դիւցազնական արիւթեամբ, մէկը 10-ի, 20-ի, 30-ի դէմ սարսափ են ազդում թշնամիներին, ոգևորում են վհատւած սրտերը:

Հայ ժողովուրդ, հայ յեղափոխական: Տակաւին նոր է սկսում պատմական մեծ դրաման, շարունակելը ընթանալ այն արիւնոտ ճանապարհով, որ սրտմական անհրաժեշտութիւնը գծել է մեր առջև, շարունակելը կուռել, թշնամին օրհասի մէջ է, դիմադրելը բոլոր ոյժով, բոլոր միջոցներով:

Յառաջ, յեղափոխական փոթորիկների միջով մղւինք միշտ առաջ փայլուն յոյսերով, դալոց յաղթանակի հպարտ գիտակցութեամբ: Եւ... չվհատինք, զոհերը չսարսափեցնեն մեզ. հերոսական գործը պահանջում է և հերոսական զոհողութիւն:

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Ւ Ս Ի Յ

23/4 մայիս 96 թ.

Մեռած Պոլսը սկսեց յուրիւր գաշնակցութեան ա-

հարեկիչներուն յանդուզն գործերով. դաշնակցականները յողնիլ ու վհատիլ չեն գիտեր:

Գարաքէօյի հերոսական դէպքին գրեթէ հաւասար գործ մ'եղաւ Գուժգարուինը: Գուժգարուի ամենէն մարդաշատ հրապարակին վրայ ցերեկով ոստիկանքովսէր Մարգար զարնւեցաւ: Մարգար Գուժգարուի ցոյցին ատեն սպանւած լրտես ասորի Կարապետին հօրեղօր որդին էր: Բոլոր ժողովուրդը հիացումով կը խօսի ահաբեկիչին սառնասիրտ արիութեան վրայ: Ատրճանակի երկու գնդակները նազով սիրելիին վրայ արձակելէ վերջ, հերոսը քանի մը վայրկեան սպասած է դիտելու համար գետինը փռած դաւաճան զոհը: Այդ փրկոցին մէջը չէ համարձակած մտնելու սպաննողին՝ որ տեսնելով թէ Մարգար անշարժ ինկած է, սկսեր է հեռանալ, իր ետև թողով սարսափի անբացատրելի ազդեցութիւն մը: Խանութիւնները անփրկապէս սկսեր են փակել ու ամեն մարդ փախիլ:

Եղիա Շահբազ Գարաքէօյի վերջին դէպքն է վեր իր անձին գոյութեանը դէմ վտանգ տեսնելով, իր խառ գիւղի տանը մէջ փակւած կը մնայ լրտեսներով ու խրուածներով շրջապատուած: Հիմա կը դողայ անոնց անունէն իսկ, զորոնք երբեմն արհամարած էր: Անշուշտ իր ականջին կը հասնին «Գաշնակցութեան» ատրճանակներու ձայները և երբէք չէ կարող մոռանալ որ մեր պատերազմը լրտեսել տւած ու ահաբեկիչը մասնել ուզած էր: Եղիա Շահբազ երեք հարիւր ոսկի զագաւ տալ հազարաւոր հայերու կեանքին պաշտպանութեանը համար, մինչդեռ Գարաքէօյի մէջ ըսպանւած ոստիկանին ընտանիքին 500 ոսկի տւաւ. դաւաճանը իր դրամով կը կերակրէ ազգակիցներու արիւնին ծարաւիները: Այդ վատ հարուստը թերևս բոլորովին սնանկանալէ յետոյ կեանքէն ալ զրկւի. դրամ մը, որ հանրային օգտին համար չգործածուի՝ աղիտաբեր է ժողովուրդին: Երբ այնքան ազնիւ և օգտակար կեանքեր հետզհետէ կը վերնան, մարդկային խիղճը չի ներեր, որ այդպիսի ապիկար դրամատէրերը ժողովուրդին արդար վաստակը անհոգ կերպով վայելեն:

Բերայի մէջ հայ կին մը տեսնելով, որ իրենց դիմացի տունը ոստիկաններէ պաշարւած է՝ վախէն կը մեռնի:

Կեդրոնականի շաղկերտ մը վերջերս բոլորովին անտեղի կերպով պատահաբար ձերբակալւած է: Խեղճը վախէն, բանտի խտութիւնէն ու ցուրտէն թոքախտ եղած ամենածանր վեճակի մէջ անկողին ինկած է. գուցէ քանի մը օրէն հայրենիքի նահատակներուն քով երթայ հանգչել, իր հետ ամենով ո՞վ գիտէ, ի՞նչ յոյսեր: Ո՞վ կրնայ ապահովեցնել, թէ վաղը սուլթանի դազախութիւնը չգիտի յօշոտէ ուրիշ շատ մը մարդկային բարօրութեան երազներով փթթած մատաղ հոգիներ, ո՞վ գիտէ թէ ինչեր կսպասեն մեր ծաղիկ սերունդին բաշխօզուկի գազանանոցներուն մէջ:

Փողոցին մէջ կը քայլես և եթէ ոստիկան մը գաւառացի ըլլալդ կուհեց կը կեցնէ քեզ՝ վճար լաւ մը խուզարկելով՝ քսակդ ու ժամացոյցդ առնելէ վերջ, բանտ կը խրկէ: Այսպէս ամեն օր, հարիւրաւորներ կը ձերբակալուին ու ի՞նչ կըլլան, մարդ չգիտէ. բանտերը լեցւած են հայերով, ուր մարդերով լեցուն պարկեր

ծովը կը նետուին Մարմարայի հոսանքին մէջ... Այս ամենը քաղաքակիրթ ազգերու անխիղճ ներկայացուցիչներու աչքին առջև տեղի կունենայ: Պատրիարք ու վարչութիւն ուրականներ են միայն, չենք գիտեր թէ իրենք վստահ են արդեօք իրենց գոյութեանը:

Եւ ահա այս բոլորին մէջէն կը բարձրանայ յեղափոխութեան արիւնոտ սուրը, որ դաւաճաններուն գըլլալուն շողալէ յետոյ պիտի մխի վերջապէս թշնամիին կուրծքը: Հայ ժողովուրդ, արտասուալի աչքերդ յուսալից անոր դարձուր, նա է քո՛ ապաւենդ ու փրկութիւնդ. գնա՛ փնտռել քո խաղաղութիւնդ ու ազատութիւնդ անոր դրօշին տակ ու զովացիր անկէց կաթիլած արիւնով: Արևելքէն Կոստանդիանոսի երեցած խաչն է անիկայ, դուն ա՛յ անով պիտի յաղթես. պրտորին ամուր փարէ ու պաշտէ զայն: Մարդկային պատիւդ ոտնակոխ եղաւ, այլևս ժամանակ չէ մեր աչքերը դէպի երկինք բարձրացնելու. դուն կը մեռնիս ամեն օր չարաչար ու դառնութեան բաժակին վերջին կաթիլը քամելով: Լաւ չէ՞ միթէ, որ սուրդ մերկացնես, քաջութիւնով մեռնիս ու յիշատակդ պաշտելի ընես:

Ձարկ, մի՛ վախնար մահէն, ուր մահ չկայ՝ հոն կեանք ալ չկայ, բնութեան և պատմութեան անժխտելի օրէնքն է այս: Մեր թշնամին արեան հեղեղներու մէջ ընկղմած չարատանջ հոգեւարքի յուսահատական ճիգեր կընէ միայն. նա քեզմէ շատ աւելի տէր է: Մի՛րտ առ, հայ ժողովուրդ, քո բարոյական բոլոր ուժերովդ հետևէ մեր նահատակ ընկերներու գծած շաւղին և վերջին ուղիքի հարածդ տուր փտած, որդնոտած բունակալութեան խորխուլ կուրծքին և փրուէ զայն գետին Գողիաթի անշնչացած դիակին պէս: Տուր ձեռքդ եղբայր, եղբայր եկը մենք...

Յառաջ, հայ կտրիճ, մի՛ նայիր ետևդ, զարկ ու անցիր:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

ՊՐՈՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԼԻԹՅ

Կուր վաստակներն իրզան գաւառի Ա. Սալ վանքում. վանքի հարստահարումն ևւ աւելումն:

I

95 թ. հոկտեմ. 25-ն էր, որ Բզնունեաց գաւառը ենթարկեց քրդերի թալանումին, սպանութիւններին: Այդ լուրը շուտ առեց խիզան գաւառին տիրապետող Շէյխ Իբրահիմը և նրա հետ մի քանի քիւրդ ցեղապետներ, որոնք են՝ Չիբրանցի Սէյիդ բէկը, Գառգառ գաւառի Չիբրանցի Օսման բէկը իւր արբանեակ Գազախ Մամէի հետ, Ռշտունիքում եղող տիւտեղցի Օսման և Մահմադ բէկերը, նորդուգում գրաւանցի Շաքիրը և մի քանի աստոյ պատիժ ցեղապետներ Ղերոյիշեալները թէ վանքը և թէ միւս գաւառները աւերելուց առաջ խորհրդակցեցին Շէյխ Իբրահիմը հետ՝ թէ ինչպէս պէտք է շարունակեն դարերից ի վեր սկսած

*) Թէ այս յուլուսը ևւ թէ Կիւմիշլիսանէյի նամակը մեր ձեռքը շատ ուշ հասան:

իրենց սխրագործութիւնները, միանգամայն այլևս վերջ տալու, աւերելու բառի բուն նշանակութեամբ Ասսպուրականի գաւառաբնակ հայերին: Խորհրդակցութիւնից անմիջապէս յետոյ Շէյխը իր գիւղից՝ որը վանքից գտնուում էր մի ժամ հեռավորութեան վրայ ուղարկեց մի քանի ձիաւորներ մեզ մօտ՝ վանքը և պահանջեց Սահակ վանահայր վարդապետից 17 հատ ոչխար, 8 տիկ էլ իւր: Սահակ վարդապետը իրան հիւանդ ձեւացրեց և չուզեց տեսնուիլ, առաջարկեց ինձ տեսակցել: Ես էլ վարդապետ եմ և վանքումը վերատեսչութեան պաշտօն էի վարում: Ի՞նչ արած, շէյխի մարդկերանց ճանապարհեցինք՝ կատարելով նրանց պահանջը կիսով չափ, խնդրելով, որ բաւականանայ շէյխը 8 ոչխարով և երկու տիկ իւրով:

Մահմեդի փոխանորդ շէյխը կատաղում, փրփրում է, երբ տեսնում է իր պահանջը լիովին չենք կատարել: Ներկայ ցեղապետներին նա երդւել է տալիս, թէ պէտք է գնանք բոլորեքեանս և քանդենք նախ վանքը, յետոյ շարունակաբար Խիզան, Գառգառ, ԳըՏ, Ռընդվան, Սպարկերտ, Կարճկան, Ռշտունիք և այլ հայաբնակ իրար կից գաւառները, աւերենք այդ գեաւուրների տները, մաս մաս կտրատենք նրանց, նրանց աղջիկները բերենք մեր կանանոցումը հարձեր անենք, վանահայր խալֆա Սահակին մորթազերծ կախ տանք ծառերից, որ այդ ֆրա-գեաւուրները հասկանան Մարգարէի փոխանորդի ոյժը: Ի՞նչ, ձեզ տեսնեմ իսլամի հաւատացեալներ, դե՛հ առաջ դէպի վանքը“:

Ի գէպ չմոռնանք ասել, որ հոկտ. սկզբներին Պաշտակցութեան հայդուկային մի խումբ վերոյիշեալ գաւառներումն էր: Քանի որ խումբը այդ կողմերումն էր, շէյխը իր մարդկանցով որ անկիւնն ասէք մտել էր, մի բուռն հայ քաջերի, ֆեդայիների այդ կողմը երևալը սարսափի մէջ էր թողել նրանց: Բայց խմբի բացակայելուց վերջ, սոված գայլերի նման ատամները սրած, սուլթանի հաւատարիմները սկսեցին Ս. Խաչ վանքից իրենց սխրագործութիւնները:

Սպասած ծանր հանգամանքները ի նկատի ունենալով՝ Պաշտակցութեան Պաշտակցութեան՝ Ասսպուրականի Կեդրոնական Կոմիտէից պահանջեցինք մի խումբ հայդուկներ վանքը և շրջակաները պաշտպանելու համար: Հայդուկներից երկուսը հասան վանքը հոկտ. 24-ի երեկոյեան, իսկ մնացեալներն էլ յետոյ պիտի գային: Եկան այդ երկու հերոսները, բերելով իրենց հետ բացի իրենց հրացաններից և զենքերից նաև երկու էլ աւելորդ փամփուռաւոր հրացաններ մեզ համար: Հոկտ. 26-ի առաւօտն էր. քնած էինք: Վանքի պահապանը իմաց տւեց թէ շրջապատած ենք բազմաթիւ համրդիէներով: Մենք շտապով վեր կացանք, մեր փորդիկ ուժերը կանոնաւորեցինք. 20 հոգի էինք, չորս փամփուռաւոր բերդան հրացաններով, մնացեալները զինուել էին հին, չափավոր հրացաններով: Վանքի գոնները ամրացրինք: Առանց էն էլ վանքի դիրքը բաւական ամուր է. շինած է մի բարձր բլրի վրայ, որ տեղից տիրապետում է շրջակայ գաղտափայրերին: 17 տարւայ մէջ հազիւ կարողացել են շինել Վասիլ-Կոստանդին և Գագիկ Արծրունի հայ թագաւորները: Վանքի շինութիւնը յիշեցնում, պատկերացնում է մեր առաջ հին արեւելեան արաբական ճաշակի նուրբ և հաստատուն ճարտարապետութիւնը: Եկեղեցում կայ մի տա-

ճար, մի դարբաս և սրբատաշ քարերից շինած պատերը զարդարած են ոսկեղօծ քանդակներով: Եկեղեցու կրտուրի վրայ իշխում են հինգ նրբակերտ կաթուղիկները: Վանքն ունի 30 միաբանութեան խուցեր, մի գեղեցիկ երկյաթիկանի առաջնորդարան, մի ուսումնարան և մի գրագարան: Առաջին բաժնում վանքի տնտեսութեան շինութիւններն են: Բագով անցնում են երեք աղբիւրներ. ամբողջ վանքը շրջապատւած է հսկայաշէն կրկնապարիսպներով իրենց խրամներով... Վանքի պարիսպների չորս կողմը իշխում են չորս բարձրաշէն աշտարակներ, պատերազմական դիրքեր, իսկ պարիսպներից գուրս՝ վանքի ընտիր պողատու ծառերով զարդարւած երեմային պարտէզն է. պարտիզում կարելի է գտնել ամեն տեսակ պտուղներ. հազարամաս ծառերով անտառն էլ գրեթէ ոչ մի տեղում չունի պէսը:

Մեր առաջին գործը եղաւ բաժանել մեր փոքրիկ խումբը չորս մասի և ամեն մէկ խումբը բռնեց պարսպի չորս անկիւնի աշտարակները: Կուր առաջին նշանը՝ նախադրածակը մենք եղանք, վճռելով մինչև մեր արեան վերջին կաթիլը պաշտպանել վանքը: Վանահայրը, ազնիւ ծերունին, հրացանը ձեռքին թէ կուում և թէ խրախուսում էր մեզ՝ յուււէք, ասում էր, կոււէք տղերք, բայց փամփուռների, բարութի խնայողութիւն, կամ մեռնենք պատուով և չենք տեսնի մեր վանքի աւերումը, կամ այս շներին յետ կը դարձնենք կորագլուխ: Յետ չէի մնում և ես, որպէս վարդապետ քաջալերելու մեր հերոսներին:

Տաքացել էին մեր քաջերը, տաքացել էին և քրդերը... Մենք շատ լաւ գիտէինք, որ մեր թշնամիները շուտով չեն հեռանայ վանքից. դրա համար էլ շատ քիչ էինք պատասխանում նրանց անվերջ հրացանաձգութիւններին: Կուր առաջին օրը քրդերը քիչցին վանքի տաւարը և ոչխարի հօտերը, որ գտնուում էր վանքից կէս ժամ հեռավորութեան վրայ՝ սովորական անտառներում և փարախներում. 80 հատ լաւ, ընտիր տեսակների եզ, գոմէշ, կով իսկ 540 էլ ոչխար:

Մեր գնդակները ոչ մի ազդեցութիւն չարեցին հօտն և նախիր քոչ խմբի վրայ, տարան ու տարան: Սկսեցինք աւելի կատաղաբար կուել վանդակներում փակւած առիւծների պէս, բայց ի գուր, վախկոտները չէին մօտենում. նրանց թիւը կը հասնէր մօտաւորապէս 3000 ձիաւորների: Առաջնորդողների գլխաւորը՝ շէյխը ինքն էր. մնացեալները Փանատիկոս Մէյի-Փագիները: Պաշտակցին մեզ մինչև 5 օր: Մեր ուղարկական պաշարը վերջանալու վրայ էր: Վերջին օրւայ կէս օրին էր, երբ տեսանք հեռուից ոչխարի մի փոքրաթիւ հօտ մօտենում է վանքին: Մենք շարած իրար երես նայեցինք, թէ գուցէ մեր ոչխարները յետ են դարձնում. և իսկապէս 50 ոչխար բերում էին ուղիղ մինչև վանքը: Նրանցից մի քանիսը սկսեցին մօտենալ մեզ: Հրացանաձգութիւնը դադարեց, պատգամաւորները մօտեցան մեզ: Սկսեց բառակցութիւնը: Խօսողը ես էի նրանց հետ: Նրանց առաջին խօսքը եղաւ թէ՛ Պաշտակցութեան մի մասը յետ ենք դարձնում, մնացածն էլ շուտով կը բերենք“: Բնական է, որ մենք չհաւատացինք: Մի խաղ էր, որ խաղացին մեր դիւին: Այդ իրարանցման ժամանակ մեր քիւրդ հօտաղը վանքի միւս կողմի դուռը բաց էր արել, իբր թէ ոչխարները ներս առնելու դիտաւորութեամբ: Իսկի ժամանակ էլ չեղաւ, որ պատ-

ժէինք այդ անպիտանին դռները բանալու համար. նրա այդ վարմունքը յիմարութիւն, թէ դաւաճանութիւն էր նրա կողմից, էլ չգիտենք, արդէն բանը անցել էր:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Յ

I

Տեղոյս կուսակալ Գատրի պէյը սեպտեմբեր 25-ի կոտորածէն ու թալանէն վերջ, ցնծութեամբ յայտնած էր իր արբանեակներուն թէ՛ «Ա՛լ հայուն քով հոգի չըմնաց, այլևս չեն կարող գլուխ բարձրացնել և թէ պիտի ստիպուին իսլամներու դռներն դիմելով ողորմութիւն խնդրել»: Ասկայն այս տիմար ցածորդին շուտով հասկցաւ, թէ ամեն ինչ իր կարծեաց հակառակ կը շարժի:

Հայ ժողովուրդը իր վէրքերուն մէջ բաւական գիտցաւ, թէ ուլքեր են իր բարեկամներն, սկսաւ օրհնել յեղափոխութիւնը և աւելի եռանդով կարգաւ ու ցրել «Թուօցիկ թերթեր» կամ այլ յեղափոխական հրատարակութիւններ.— չուշանալով և նոյն իսկ յայտարարել թէ՛ «Տաճկական աներես արարքներն հայերը միայն խնայանել կարող են»:

Սուլթանին տափակ ներկայացուցիչը չէր կարող տանել հայերուն այս կարգի զգացումներն, շուտով ձերբակալել տուաւ խուսր մը հայեր (որոնց մէջ և մի հայ լրտես), ասոնց ամենուն սպառնաց արքայի զրկել, եթէ շարունակեն ժողովուրդին մէջ գրգռիչ, միւս զիւր (վնասակար) զրոյցներ տարածայնել, և կամ եթէ յեղափոխական ամենափոքր շարժում մը առաջ բերեն, բոլորն ալ կոտորել պիտի տայ... Ճամբու դրած ասերնը դարձեալ ըսաւ «Մեղք է ձեր կեանքերուն, զգոյշ եղէք, եթէ ոչ՝ դուք գիտէք...»

Բայց ո՞վ է ականջ դնողը— մարդ մը երբ կը տեսնէ իր եղբարց անիրաւի գնդակահար և սրախողխող լինելը, երբ կը տեսնէ որբերու և այրիներու մերկ և անօթի վիճակը, երբ կը տեսնէ թէ՛ ամեն «օճախ» քայքայած ու մոխիրն արեան հետ շաղախած և մօտը լսելով անբաղդ կոյսին կծու հեծեծանքը կարող է համբերել և հնազադել բու սուլթանին, ո՞վ, ո՞ր տիմար անզգան յանձն կառնէ այս:

Հայ ժողովուրդի, քո փրկութիւնը և քո ազատութիւնը կը պահանջէ, որ առանց ժամանակ կորսցնելու փարիս բարիքիդ համար մտածող ու աշխատող անձնազոհներուն, — ի՞նչ, անտարբեր մնալ և սպասել անարգ թշնամու հարածներուն. քանի որ կրկին վտանգներ մեր գլխուն թառած են, չպէ՛տք է կուսել արիաբար: գլուխ ծռենք, ստորանանք ամարդի լղզկածներուն առջև:

Ժողովուրդ, դու չես գիտեր, որ թիւրք բռնապետութիւնը սովոր է անզէնը, տկարը հալածել ու սպաննել քանի որ մի օր պիտի մեռնինք, ինչո՞ւ քաջու թիւնը չըլլայ մեր դամբանը, ինչո՞ւ Ի զէն, զէնքը թող մեր կեանքին հանգոյցը դնէ: Մենք կուսին մէջ փակենք աչքերնին ու ալ չտեսնենք սուլթանին զզուելի շուքը: Հարժէ՛ ժողովուրդ, շարժէ՛, քո օր հասը մտ

կըլլայ՝ եթէ անգործ, անտարբեր մնալ ուզես, կոյր մի ըլլար, գքեզ ճանչցիր, շարժէ՛:

II

Տգրուկ սուլթանին ծննդեան տարեդարձին հրավառութեանց հանած ազմուկներէն վերաւորեալներու հառաջանքներն կը խլանար. ամեն կողմ զարդարած էր և քաղաքակիրթ Եւրոպայի (որքան հեռու) ներկայացուցիչներն վալիին հետ միմոսական շարժումներով կը շնորհաւորէին լիտի Համիդին ոճրագործութեանց մեծ թաւահանը. իսկ մեր հայոց առաջնորդարանը— դափնեայ տերներով դուռը զարդարած էր և կը գրկէր. հայ արեամբ ներկած տաճկի պիղծ դրօշակը: Առաջնորդի փոխանորդ Մեսրոպը քահանան և իրեն պէս մտածող ոչխարագլուխ կէսաղանները երեւի յեղափոխական վարձատրութեան կսպասեն:

Ժողովուրդի հարազատ զաւակներէն երկու հոգի շուտով մերկացուցին դուռը և վար գլորեցին անպատիւ դրօշակը: Կառավարութիւնը կատղած՝ պոչը շարժեցնելով կը մտածէ գտնել հեղինակներն:

Ժողովուրդ, այս անգամ ալ կըսենք.— ասա՛ քեզ դիպլոմատիան, ասա հաստափոր աղաները, ասա կղերը, միամտութիւն չէ՞ ասոնցմէ մարդկութիւն յուսալը. չըգիտես, որ ասոնց փափազն է թէ միշտ դու լինիս իրենց գերին, սարուկը, իրենց ենթական:

Կառավարութիւնները չեն կարող կամ չեն ուզեր քո դահիճը՝ սուլթանը պատժել, բայց սիրով կը սեղմեն, կը թոթակեն հրէշին ձեռքերը, որովհետեւ իրենց հրամայողը սեպհական շահն է: — Գիտեն, տեսան ամեն ինչ, բայց քո սիրուդ համար խօսել անգամ չեն ուզեր. ինչ որ ընեն իրենց օգտին համար է, իրենցը, միշտ իրենցը:

Աղա կոչւածները, նոյնպէս թշնամի են ազատ ձրգտողներուն, կուզեն ընկճած տեսնել քեզ, որպէսզի անարգել իրենց շահերու մակարդակը բարձրացնեն և իրենց աղտոտ բարքերը կարենան թափաւորեցնել անկեղծներու վրայ:

Որկրամոլ կղերը, շատ քիչ բացառութեամբ, կուզէ քեզ կոյր, տգէտ և հլու տեսնել, որպէսզի քամէ արիւնդ և լափէ յառաջդիմական ջանքերդ, ալ աչքերդ յառած որո՞ւ կը նայիս. մարդակերներէն մարդասիրութիւն կակնկալես:

Չորս կողմը նայէ ու գտիր քո և զաւակացդ համար բարիք ցանկացողներն, քո փրկիչ դ յեղափոխութիւնն է. — ամօթ է ձեռքերը ծալելով նստիլը, փայլուն ապագան ներկային մէջ պահած է, կուսով կորզելու է զայն բռնապետներու ձեռքէն: Կրուողը արժանի է ազատութիւնը գրկելու, կուսով կեանքի հրաւերն պիտի ստանանք:

Ձէյթուն չկոտորուեցաւ, կոտորեց, ինչո՞ւ, որովհետեւ ամենը միասին կուեցան.— ով որ վարանի նա վատ է և արժան ասնակոխ լինելու:

Ժողովուրդ, ապագան քեզ կսպասէ, շարժէ, օն մի կենար, շարժէ՛, ցատկէ՛ օր հասի դ վրայէն:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ի Ց

Ա Ց Ա Ն Ա Ե Ի Պ Ե Յ Ր Ո Ւ Թ

Ատանայի և Պէյրուֆի մէջ ևս դէպքեր տեղի ունեցան: Ասկէ երեք շաբաթ առաջ, կիրակի օրը երեք հայեր հարբած Քէմար-Ալթը-ի մզկիթին առջևէն կանցնին իրարու հետ կատակ ընելով: Մզկիթին իմամը պատեհ առիթ կը սեպէ այս և իջէն կը հրաւիրէ թիւրքերը, իբր թէ ասոնք հայհոյութիւն ըրած ըլլան իրենց հաւատքին և պատւոյն դէմ: Անմիջապէս բազմաթիւ զինեալ թիւրքեր բիրտով կը ժողովին 'հոն. երեք հայերէն մին կապանւի, երկրորդը կիսամեռ (կըսուի թէ յետոյ մեռած է) և երրորդը վերաւորեալ կը մնայ հոն. վերջը կ'մտնեն փողոցները և կսկսեն գանակոծել դիմացնին ելնող հայերը. 30-40 հոգի թեթեւ կերպով կը վերաւորին, քանի՜ մը խանութներ կը կողոպտին. բարեբաղդաբար կիրակեան պատճառաւ խանութները գոց են եղեր. մէկ ժամէն յետոյ կառավարութիւնը կը յաջողի խռովութեան առջևն առնել: 'Նոյն միջոցին Մերսինի առջևը գտնուող Ամիրիկեան զոհաւորին ծովակալը կը հասնի Ատանա իր օգնականին հետ և վալիին կազդարարէ խռովութեան առաջն առնել, հակառակ պարագային զօրքը ցամաք հանել սպառնարով: Դէպքէն ասդին բաւական թւով ձերբակալութիւններ եղած են, որոնց վրայ տեսակ-տեսակ թրքական բարբարոսութիւններ կը գործադրին եղեր բանտերուն մէջ: Տարսոնի մէջ թիւրք մը ուսական հիւպատոսին (ցոյց մ'է) դաշտն քաշեր է, հիւպատոսը հրամայեր է ոստիկանի մը, որ նոյն միջոցին պատահմամբ այնտեղէն կանցնի եղեր, «Ձերբակալել սրիկայ թիւրքը»: Պատիկանը կարեւորութիւն չէ տւած հիւպատոսի խօսքերուն: Քոնստիւլը դիմեր է Ատանայի կուսակալին, բայց ապարդիւն: Ատանայի մէջ նոյն հիւպատոսի թարգմանին տունը քարկոծեր և ապակիները կտորտած են (սա ալ յոյն է), այս մասին եղած գանգատներն ալ ապարդիւն մնացած են: Ատանայի և Տարսոնի մէջ սարսափ տիրած է, ժողովուրդը փակած կը մնայ տան մէջ, ամեն բոպէ կտորածի երկիւղ կայ:

Պէյրուֆի մէջ թիւրքերը երկու քրիստոնեայ կըսպանեն, մին արաբ և միւսը յոյն, որուն վրայ քրիստոնիայ տարրը գրգուռելով՝ 70-ի չափ անձինք զինեալ լեռը կը քաշեն: Քանի մը օր վերջը փողոցներուն մէջ երկու մահապահանայ դիակներ կը գտնուին, անմիջապէս կառավարութիւնը երեսունի չափ քրիստոնեաներ կը ձերբակալէ իբրև կասկածելի: Յուզումը կը սաստկանայ. տեղւոյն եպիսկոպոսը երևելիներուն հետ խորհրդակցեցին յետոյ կը դիմէ կառավարութեան և խրատիւ կը պահանջէ, որ բանտարկեալներն արձակեն առանց մի բոպէ պայմանաժամի. «Եթէ չարձակէք, կըսէ, հիմա քաղաքը տակն ու վրայ պիտի ըլլայ, գտէք ոճրագործները և կատնեք, միթէ մեր վրայ ևս կուզէք կատարել այն խժոժութիւնները ինչ որ ըրէք հայոց, Հայաստանի մէջ»: Բաւականաչափ քրիստոնեաներ պալատը կը դիմեն. կառավարութիւնը խոհեմութիւն կը համարի արձակել բանտարկեալները, որոնք նոյնպէս

լեռը կը քաշեն: Մեծ շքեղութեամբ կը կատարուի երկու սպանելոց յուղարկաւորութիւնը, նւագածաց խմբով, առաջևէն սրախաղեր ընելով և հազարաւոր անձանց ընկերակցութեամբ. յուղարկաւորներու միջոց երիտասարդները նախատինք և հայհոյանքներ կրնն հանդիպող մահապահաններուն, մահամեղին դէմ լուտանքներ կը տեղան, ժողովուրդը կը պոռայ, «Ո՛վ նահատակներ, մի ցաւիք, ձեր ծաղիկ հասակի մահան համար, որովհետև ձեզմէ իւրաքանչիւրին փոխարէն իրենցմէ հարիւրաւորներ պիտի մտնուին»:

Կ Ե Ս Ա Ր Ի Ա

Մեծ կտորածէն ի վեր նշանաւոր դէպք մը պատահած չէ Վեսարիոյ մէջ: Պայրամին, ինչպէս գրած եմ արդէն, շատ կը վախցէր թէ կտորած մը ևս ըլլար: Արդէն թիւրքերը, թէ՛ քաղաքին և թէ դիւրիւրուն մէջ, պատրաստութիւններ տեսած էին իրենց գազանային դիտաւորութիւնը գործադրելու համար. իրենց թուրերն ու դանակները կը սրէին բաց է ի բաց և ազատօրէն կը պոռային թէ՛ «Պայրամտա գանդը փրկու ելի՛ճէ՛յիդ»: Սակայն կառավարութիւնը, ոչ ոք դիտէ ինչ պատճառաւ և կամ ինչ մտածումով, թոյլտուութիւն չըրաւ այս բանին: Այսու հանդերձ, մասնաւոր սպանութիւններ և սպառնալիքներ պակաս չեն: Դիւր անցեալ օր էր, որ թիւրքերը հինգ հաս հայ երիտասարդներ սպանեցին վայրենօրէն, Ձէքնի դիւղի ջաղացքին մէջ ալ 12 երիտասարդներ՝ երբ կը ճամբորդէին խեղճերը:

Հայերը իսպառ ջնջելու և ամեն տեսակ խժոժութիւններ ի գործ դնելու համար, բաւական մեծ ընկիւրութիւն մը կազւած էր Վեսարիոյ թիւրքերուն մէջ: Կառավարութիւնը իմանալով ցրւած է որպէս թէ ամենքն ալ:

Ատենէ մը ի վեր զարմանալի երևոյթ մը տեղի կուսենայ Վեսարիոյ մէջ, որ ուշադրութիւնը գրաւած է բոլոր ժողովուրդին, մանաւանդ թիւրքերուն և ամենուն ալ սարսափ ազգած: Քանի մը թիւրքեր, որոնք կտորածի ժամանակ հարիւրաւոր անմեղ արիւններ թափեցին գազանօրէն, կամ յանկարծամահ կըլլան և կամ խելագարելով փողոցները կիյնան այլ և այլ խօսքեր ուղղելով թիւրքերուն, որոնք անշուշտ հաճելի չեն իրենց: Ասոնցմէ մէկը անցեալ օր խնթախախտով կը պտտէր քաղաքին մէջ՝ ինքզինքը ահագին սանդուղի մը լծած ու շարունակ կը պոռար թէ՛ «Ի՛ճէ՛ պե՛ցլէ՛ օլուր կիւսվուր քէսէնին հայը»: Սոյնպէս իւրաքանչիւր քայլափոխին, երբ շունի մը հանդիպէր, իսկոյն իր շուրջը գտնուողներուն դառնալով կըսէր. «Ի՛ճէ՛ պու սուլ թան Համիդ դըր, շու գատը տըր, օտէ միւլթեսարըրը»: Թիւրքերը անմիջապէս բռնելով խեղդեցին կամայուկ մը այս ողորմելին, ինչպէս նաև ուրիշներ:

Ն Ա Մ Ա Կ Կ Ի Ի Մ Ի Շ Ի Ա Ն Է Ի Յ

Քաղաքէս մի քանի երիտասարդներ կամախի ասպատակամբին միացած ըլլալով՝ կառավարութիւնը այդ առթիւ աշխատեցաւ իսլամ հասարակութիւնը հայոց դէմ գրգռել զանազան հնարովի պատմութիւններով, առասպելներով որով երկու տարրեր բոլորովին թշնամացան: Աւելորդ է պատմել, թէ փախստականներու խեղճ ծնողները և պղքականները որպիսի ճնշմանց ու տանջանաց մատնեցան:

Երբ Տրապիզոնի, Բաբերդի և գիւղերու մէջ կատարուած պեղումներ ջարդի լուրը մեզի հասաւ, իրաւունք ունեցանք յուսալ որ փատիշահին կառավարութիւնը, իր շնորքը հոս ալ պիտի փայլեցնէ:

Ինչ երկարցնենք, տաճկաց արտակարգ շարժումէն և ուրիշ երեւոյթներէն հասկացեցաւ, որ Տրապիզոնի կուսակալ Գատրի պէյէն կոտորածի համար գաղտնի հրահանգներ եկած է.— այն ատեն հայերը մնացած խանութիւնն ալ գոցել տւին: Գայմագամը տեսնելով որ դաւադրութիւնը երևան ելաւ, ամեն նենգամտութիւն գործադրեց, որպէսզի՝ կարողանայ եղած կասկածները փարատել: Սկսաւ ամեն փողոցի դուռն եղած անդործածելի լապտերներն վառել տալ՝ ու գիշերաշրջիկ պահակներ ման բերել, միևնոյն ժամանակ տեղւոյն վաճառականներէն Հաճի Նշան Իսրայէլեանի հետ հայ աներն կը պտտէր ըսելով՝ «Բնաւ հոգ մի՛ ընէք, ամեն զգուշութիւն ձեռք առնուած է, որպէսզի որ և է անհաճոյ դէպք չպատահի, դուք բացէ՛ք խանութիւնդ և այլն»: Մուստիկներն ալ իր ձուռնաբանութեան լրացուցիչը եղան: Միւս կողմէն, չէր մոռնար նաև տաճիկ ազաններու և պէյերու հետ ջարդի մասին խորհրդակցութիւններ կատարել:

Սուլթանին յանձնախուժը բոլոր շրջակայ տաճիկ գիւղերը հրահանգներ ղօկեց, որպէսզի հոկտեմբեր 12-ին ամենը խնդիկէ դիւղը հաւաքուին: Որոշուած օրը երբ հասաւ, գայմագամը նկատեց, որ ժողոված խուժանը բաւական չէր, իր ծրագիրն առաջ տանելու համար, ուստի յարձակման գործը յաջորդ օրւան թողուց պատիբիւրով միանգամայն, որ կարելի եղածին չափ աւելի բազմութեամբ գան:

Նոյն օրը ժամը 9-ին (ը. թ.), տաճիկները պարապ չմնալու համար կորնշան տեղը սպաննեցին ս. Փրկիչ վանքին հոյիւ Արշակը և բոլոր հօտն աւարի առին: Քաղքին հայերէն ոմանք գրգռուած՝ անմտաբար բողոքեցին իսաղաղապէս գայմագամին:— Որո՞ւ գանգատել սուլթանի պաշտօնեային...

Բողբը, այն արդիւնքը առաջ բերաւ, որ 12 զինուորներ վանքը գնացին փորերնին կշտացուցին և դիակը տեսնելէ վերջ հա դարձան ըսելով՝ «Մեզի ասկէ անդին անցնելու հրաման չկայ»:

Հոկտեմբեր 13-ին, ժամը 4-5 (ը. թ.) Տեր-Սմբատ քահանան մի քանի մարդով գնաց մեռելը թաղելու, բայց յանկարծ հրացանի պայթիւններ լսեցան և ահա մահճեղականներու մեծ բազմութիւն մը վանքի վրայ սկսաւ գալ: Քահանան հազիւ հազ փախչել կարենալով՝ շունչը քաղաքը առաւ, իսկ ընկերներն ալ անյայտ եղան: Հոս աւելորդ է ըսել թէ ինչ հայհույ-

ներով ու աղաղակներով աւերման և թալանի լգործն առաջ տարին:

Դեռ միևնոյն օրը գայմագամը լրբաբար կանչել կուտար թէ՛ «Կաղաղութիւնը և անգորութիւնը կատարեալ է, ամեն հայ խանութներն բանալով իրենց գործերով թող զբաղին»:

Որոշուած ժամուն արդէն կիւմիշեանէ իր չորս կողմէն պաշարուած էր: Տաճիկներէն մեծ խուժը մը շուկային վրայ վազեց, մաս մը տներու վրայ և մոլեռանդներու սուտար մաս մ'ալ Հաճի Նշան Իսրայէլեանի տունը պաշարեց: Հաճի Նշան մինակ իր մէկ հրացանով շարունակ չորս ժամու չափ կրակ ըրաւ, 5 մարդ սպանեց և 4 հոգի ալ վերաւորեց: Ոստիկանները տեսան, որ կուտով գործը չափտի վերջանայ, տունը կրակ տալ սկսան, հաճի Նշան բոցերու մէջ չմնալու համար, հրացանը ձեռին դուրս նետուեցաւ, բայց թշնամին երու կարկուտի նման թափած գնդակներէն մեռած վար ինկաւ: Այս մէկ օրինակը քիչ մը կասեցուց տաճկաց գազանային եռանդը: Քաղաքին մէջ մեռնողներուն թիւը 7 է, սակայն շատեր, որոնք հունձքերէն ի վեր Բաբերդի դաշտերն կը գտնէին, նոյն տեղեր պատահած զարհուրելի ջարդի ատեն զո՛հ գնացին:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Ր Զ Ը

«Ինչպիսի մարդ» երկար եւ տաժանելի նոյնաբան մէջ է. այլեւս իր շուրջը կը տեսնէ միայն հրդեհի հորիզոններ, ծխաշունչ աւերակներու վայր միջին ուրախամտեր և իր զարհի ներքեւ ահարկու անդունդ մը:

Ներուայն Հայաստանի տրամին հանդիսատես ըլլալէ յետոյ, հիմա կրեալին վրայ կը նայի նոյն անգալութիւնով: Կրեալն կը կուտ թիւրքոյ տմարդի վարչութեան դէմ: Եւրոպայի ազգը սրբազան ոգևորութիւնով մը շրջապատած է իր կողմնակա կողմերը: Վիեննայի եւ թրիեստի յոյն վաճառականները հանգամանաբար ձեռնարկած են ապստամբներուն օգնութեան համակարգը: Մուլթանը իր ժառանգական սովորութեան համեմատ, կոտորածով ու կրակով ուզեց ծնշել ապստամբութիւնը: Կիլիկիայէն, Ջիւնիկիայէն եւ Սեւասիկիէն բազմաթիւ զօրք ուղարկուեցաւ: Եթոտրայի կուսակալը, Ապրուլլան փնջան զնաց Կրեալէ մէկ հարաւորով վերջ տուաւ համար խոտովութեան: Ապրուլլանի զօրքը եղաւ սուլթանի Ֆելմուսը կազմաւ, անոր անասանաւ զժապարտութեան սպառնացիները ի վեր հանել եւ թիւրք զինուորներուն ու Պէնկազիի պաշտօնաւորներու շարքը: Իրանուս տալ ուզածին ըսելով:

Կողմին արեւմտեան ծայրը, Դանիայի շուրջը գտնուած բոլոր գիւղերը կողոպտուած, սյրւած եւ ընտանիքները ահաբեկ լինելը ապստամբած են: Բանի մը անգամ ապստամբները ստատիկ շարք տին թիւրք զինուորներուն, որոնք իրենց պարտութեան վրէժը կուտէին թշուառ քրիստոնէայ զինուորներէն: Կատարի կուտ մը մէջ, թիւրքերը համով շարք մ'ուտել: վերջ կծիկ դրին, թշնամին յանձնելով 5 թուրքներ, մեծաքանակ մարմինի հրացաններ և 200 դիակներ:

Դանիան կը գրեն թէ, կարողական նաւերը պաշտօնաւորութիւնով կը դիտէին Բիսամի լեռներուն շուրջը գիւղերու հրկիզումը: Հիւսպատները յանդիմանազիր յրկիցին նոր կուսակալին, որ կարեւորութիւն չմտայեք, «մասը մուտք անկարգութիւններ» են ըսելով: Կողմին արեւելեան կողմը բազմաթիւ գիւղեր աւեր աւերակ եղան, բայց ոչ կրակով, որպէսզի հուսէն չը նշմարել: Թիւրք պաշտօնաւորները հերակեծոյզ գրակել վերջ բոլոր վաճառատուները կողոպտեցին. յետոյ կողոպտուող Դանիա բերելով արծակ համարձակ կը ծախէին: Բանի մ'օր անաջ ալ թիւրք զինուորները նոյնպէս կը ծախէին օսկը, սուլթանաշաններ, ժամացոյցներ և կը պարծնային թէ Հայաստանէն քերած են զանոնք:

Պերսիկ «Թիւրքական» թիւրքի թղթակիցը, Կրեալի կացութեան մասին Ապրուլլան փաշայի կարծիքը կը նարթել: Անուստիկ պատասխանը:

«Տեղ տեղ պզտիկ ապստամբութեան կեղծոյններ կան եւ շատ մը գիւղեր հոյ ծարակ եղան ապստամբներուն ձեռքով:--Շտորհիւ թիւը վարչութեան ուղղամտութեան եւ հաստատակամութեան կարգը եւ ապահովութիւնը իրենց պիտի վերահաստատուի կողմէն մէջը:»

Երբ կողմէն մէջ մարդկային զագամութիւնը անարգել շարիչներ կը գործէ, հապա եւրոպական գրահաւորները ի՞նչ պաշտօն ունին:--պատասխանը պարզ է: Մուլթանը լաւ հասկցաւ, թէ ատոնք խըրտ-կիւկանք են, ինչու շրջած գտնուել, որոնք. նապատակներ անգամ չեն կրնար կախցնել:

Երբ Գանիացիները դիմեցին եւրոպական նաւերու հրամանատարներուն եւ անոնց պաշտպանութիւնը ինչոքեցին, վերջինները պատասխանեցին, թէ «իրենք հրահանգ ստացած են միայն իրենց ազգայինները պաշտպանելու»: Կեցցէ՛ք քաղաքակրթութիւն:

* *

Թիւրքիոյ մէջ ծով ու ցամաք յուզած են: Եւրոպական բաժնին մէջ Կրետէն յետոյ Մակեդոնիան է, որ կակի դարձեալ մինչեւ Գալիաններու վրայէն: Մասնատարի եւ Բրիւէթի միջեւ մակեդոնացի հրոսակները երեւցնք որ յարձակում գործեր են թիւրք ստիկաններու վրայ: Եւրոպի (Գոտով) մէջ գիշերով կառավարական պաշտօնատան վրայ դրօշակ մը տնկած էր սա լաղնական բառերով «Մեր իրաւունքները կամ մա՛հ»: Դուռը տնի իր երրորդ զօրաբանակը ամբարջնելու համար 8 վաշտ զօրք դրկեց:

Համոզիք բարենորոգումներու քմահաճ ծրագրին դէմ, Մակեդոնիոյ յեղափոխական մասնախումբը, Սօֆիոյ մէջ, հատարակեց իր բարենորոգումներու հետեւեալ չափածօրագիրը.

«Երբեք կուտակալութիւնները Մելանիկ, Գոտովա եւ Մանասըր պէտք է միանան եւ հինգ տարեան համար վաւի մը ընտրուի--ժողովն անդամները եւ անոնց քնակարանները անքննաբարելի պէտք է հռչակուին,--Գրաքննութիւնը պէտք է շնչի:--Տեղական ստիկանութիւն մը կազմի քնակիչներէն հարեւրին մէկ համեմատութեամբ:--Կաշտօնականներու անկամտմը ազգայնութեանց համեմատական ըլլալու է:--Գաւառներուն մէջ մամուլը եւ մամուլը հաստատուի եւ գլուտ հասոյթին մէկ շորթորը միայն յատկացնի թիւրքիոյ կեղծոնակն գանձարանին:--Միւս լեզուներն ալ թիւրքերէնի պէս պաշտօնապէս ծանցելու են իրենց ինքնուրու պատ ըլլայ:--Մակեդոնիոյ բոլոր ազգայնութիւններու ներկայացուցիչներէն յատուկ յանձնաժողով մը կազմի, որ կանոնադրէ քարենորոգումներու մանրամասնութիւնները:--Լիազօր եւ անորոշական ներում»:

Հապատակները իրենց փառիշահին վարչական եւ քաղաքակրթութեան դասեր կուտան, բայց ներքինապետը իր պաշտպաններուն կը հրամայէ, որ իրենց հասկցած նղանակով գործադրեն «քարենորոգումները»:

* *

Շատորք պահիկ մը կարծեցին, թէ Հայկական հարցը լուծուի արեւելեան ինքիքը մեծ ծղւթմամ մը կանցնէր. գոնէ ատժամապէս եւ կապաւէր իրերու քնական հանդարտութեան, երբ Կրետէն պայթեց եւ դարձեալ յեղաշրջեց յուսակաւ մարտի: Եւրոպական շատ տուրջ թերթեր, որոնք հայկալեան սարսափներու մասին սկեպտիկ կամ շահամտաւոր դիրք մը ընծայէին եւ անոր ապագայի մասին տաժած պզտիկ յոյսերնին ալ ըտրորովն մարած է: Մուլթանը քաջապալ կը տեսնէ իր տիւրք ապագան եւ իր զահին տակ բացւած միջին զահամէթը, ուստի իր ըտրք խօշտանքները, անտր վրէժխնդրութիւնները կը թափէ անպաշտպան քրիստոնեաներու վրէժին, արհամարելով ըզմանդակ քաղաքակրթութիւնը աշխարհը եւ բացնալուցնելով «Պիմմէ վերջը ըրհեղծ»: «Մէշէլեթ» թիւրք յեղափոխական օրգանը, կիմանայ թէ, Համոզը խելագարեր է: Բայց մենք կրնանք զգալները շնի կեկազարք՝ այլ եւ կատողն: Խելագարները յիմարանց կուղարկեն եւ կատողմները կը ստակեցնեն ժողովրդին ապահովութեան համար:

Մուլթանը իր դեսպաններուն միջոցով քաղաքակրթութիւնը աշխարհի ուշաբունութիւնը կը հրահարէ՝ անցեալ տարի զէյթունցիներուն կողմէ՛ մահմտականներուն վրայ ի գործ դրած խօշտանքներուց մասին: Եմանապէս կը խնդրէ, որ տէրութիւնները Չէյթունի քրիստոնեայ կառավարչի ընտրութեան համար առ այժմ չընդունն կոտանաւտու, որ միւս նահանգներու քրիստոնեայ կառավարչներու ընտրութեան արտն այդ ալ կը կարգադրէ: Բրիտանիայ կառավարչին ներկայութիւնը, ըստ Դիանի, կարող է նոր անկարգութիւններ առաջ բերել: Այս տեսակ կատակերգութիւններ յերեզի հարմարողներուն մէջ կը կատան միայն:

* *

Քիւրդերը իզմիրու Գասպար երկաթուղիի քանդակներուն վրայ յարձակելով սպաննած են երկու հարիւր գործաւոր, երեք անգլիացի, զերմանացի եւ ֆրանսացի ծարտաբարձներ եւ յիսուն հոգի ալ վիրաւորած են:

Չիւս վաշտ մուլթանի ներկայացուցիչը, երբ ցարի արհեստ թագաւորութենէն երկաթուղի իով կը վերադառնար Օտեսա, քանի մը

անմասնօթ մարդիկ յաջողելով անոր վակճը մտնել փորձեցին ըսպաննել զայն. բայց չը յաջողեցան եւ ձերբակալուցան:

Պոլսը ահ ու սարսափի մէջ է: Թիւրքերը ըմբռնած են, թէ Համոզը քանդեց երկրը եւ պատրաստ է մինչեւ իսկ ծախելու, ուստի փրկութեան միակ դարմանը կը նկատեն յաւանքի յեղափոխութիւնը, որ սկսած է երկիրին ամեն կաւերուն մէջ արմատ քննել: Մարդակեր հրէշը եւ իր արհեստակարարները արհաբեկ պայթող հրապուխին առջեւ անսելու համար սկսած են մայրաքաղաքին մէջ բազմութիւն ձերբակալութիւններ ընել թէ հայերէն եւ թէ տաճիկներէն: Հասարակութիւնը իրանց վիճակին վրայ յուսահատութիւնով կը նայ: Ով գիտէ Վոսիորի շքնաղ ափերը ի՞նչ անակնկալներու հանդիսանաւ պիտի ըլլան շտորհիւ վեհ սուլթանի...:

Թիւրք «Բարենորոգչական դաշնակցութիւնը» յունիս 8-ին (Ն. տ.) մեծ պիտութեանց ուղղած սրտառուէ յայտարարութեան մը մէջ կըսէ. «Կիւնցնենք ազգերուն, խնդրելով, որ թիւրք կառավարութեան թիւրքով չը թռչին. կը պաղատենք տէրութիւններուն, որպէսզի Կրետէի մէջ կասեցնեն սուլթանի եղծնազօրծու յեղափոխութիւնը, որոնք անարգանք մ'են Մուհամէդի եւ թիւրքիոյ անուն:»

«Մենք ազատ երկրի մէջ տարագիր, կը յուսանք մարդասիրութեան համակարանը շարժել այն հազարաւոր դժբախտներուն, որոնք ծնւաղներու ժամկետուն տակ կը հեծնուին»:

Ամենէն վերջը կաւեւացնէ «Երբ նախատե՛ած Եւրոպան վար պիտի նետէ իր զահէն քննակալ Համոզը եւ պիտի ազատէ բնաւորին ձեռքէն բազմատանը ժողովուրդը մը: Դաւաճան Համոզի սուրով եւ հուրով կատարած ամարդի քարքարութիւնները պիտի շարունակուին յաւիտեան»:

ՆԻՐՈՒՍԻՆԻՆԻՆԻՆՆԵՐԻ ՅՈՒՑԱՎԸ

Արշակաւան քաղաքի Կեդ. սնդ. մէջ ստացւած են. Ռեժանակ խ. 25 դհ., Որբ 10 դհ., Որոտում և Կայծակ 5-ական դհ., Յաղթութիւն, Փամիւռչտ, Յոյս, Բարեկամ, Լ. Կուսիաստանդ 10-ական դհ., Մուրադեան 30 դհ., Վազր 20 դհ., Փետուր խ. 25 դհ., Ծմակ խ. 140 դհ., Մասիս 40 դհ., Մամիկոնեան Բ. խ. 20 դհ., Վրոյր 20 դհ., Աթոռ 54 դհ., Կեղծ 20 դհ., Կարոց 216 դհ., Ակնոց 20 դհ., Ասպատակ խ. 20 դհ., Ծածուկ 10 դհ., Արշակունեան խ. 30 դհ., Ենիէրի խ. 75 դհ., Թաթուլ խ. 75 դհ., Ապուպեղծ և 20 դհ., Ծծան 10 դհ., Յուրիթ 40 դհ., Էվէրիս և Թամար 50 դհ.:

Վիշապ քաղաքի Կեդ. սնդուկի մէջ ստացւած են. Ելպիս 5 դհ., Գառնուկ 5 դհ., Արամեան խ. 40 դհ., Ասպարեղ 10 դհ., Նարիկղ 15 դհ., Արամեան խ. 15 դհ., Յառաջադիմասէր խ. 80 դհ., Պատուհաս խ. 25 դհ., Թռչնիկ խ. 25 դհ., Փափագ խ. 25 դհ., Ծ. Կողով 153 դհ., Ակնոց 20 դհ., Ազգասէր ճ. 10 դհ., Նարիկղ 25 դհ.:

Օձէն.—Ս. Ե. 40 դհ., Փիլիպպոս 5 դհ., 7 Բեվլըվեր, 2268 դհ., Արծիւ 40 դհ., Սեբաստ 10 դհ., Շանթ 51 1/2 դհ., Թրքասեաց 59 դհ., Սեւազ 40 դհ., Վազանց 216 դհ., Գրիչներ 160 դհ., Թամբուր 216 դհ., Սրբուհի 54 դհ., Հայկանուշ 60 դհ., Ա. Արթուր 1080 դհ.:

Սիւնիք քաղաքից.—Կարս խմբէն 8 դհ., Թորոս 1 մէճիս, Պօրիս 3 մէճիս, Խոսրով 1 մէճիս, Երկաթ քաղաքի Երկաթ խմբէն 2 օսմ. ոսկի, Կար քաղաքէն 2 մէճիս:

Վրիպակ.—ՄՁ 13-ի մէջ Գիտակ քաղ-ից Արմէնի միջոցաւ ստացւած 5 ռուբ. փոխարէն պիտի լինէր 6 ռուբ.:

Դաշնակցութեան անմասնօթներից խնդրում է թղթակցութեան եւ ներատուութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիլնիւս, Դաշնակցութեան ազատ տպարան: